Հավելված՝
«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոց» հիմնադրամի
կառավարման խորհրդի՝ 16.11.2016 թվականի
թիվ 06/02-Լ որոշման

Խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

Կ Ա Ր Գ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի **(այսուհետև՝ ՀՀ փաստաբանական դպրոց)** ընդունելության քննության սույն կարգը **(այսուհետև՝ Կարգ)** կարգավորում է ՀՀ փաստաբանական դպրոց ընդունվելու համար դիմում ներկայացրած անձանց **(այսուհետ նաև՝ Դիմորդ, Հեռավար դիմորդ, Ուղեգրված ԼՂՀ դիմորդ, Հատուկ դիմորդ),** հավակնորդների **(այսուհետև՝ Հավակնորդներ)** ընդունելության քննության կազմակերպման, հանձնման, բողոքարկման, ՀՀ փաստաբանական դպրոցում ուսումնառության անվճար հիմունքներով կազմակերպման ընթացակարգերը:

2. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության համար դիմումների ներկայացման, ստուգման, ստուգումների արդյունքներն ամփոփելու և քննության անցկացման ժամկետները սահմանվում են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության հանձնաժողովի **(այսուհետև՝ Հանձնաժողով)** կողմից սահմանված ժամանակացույցով **(այսուհետև՝ Ժամանակացույց)**:

3. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության **(այսուհետև՝ Ընդունելության քննություն)** անցկացման, ինչպես նաև Կարգի հետ կապված այլ հարցերի վերաբերյալ նամակագրությունը Կարգի 1-ին կետում նշված անձանց հետ իրականացվում է առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ անձի՝ Ընդունելության քննության դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու կամ ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում տեղադրելու եղանակով:

4. Ընդունելության քննության վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում կամ ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում: Ժամանակացույցը, շտեմարանը կարող է հրապարակվել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում կամ ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում կամ ուղարկվել Հավակնորդի էլեկտրոնային հասցեին:

5. Գրավոր փաստաթղթերը համարվում են պատշաճ ուղարկված Դիմորդի, Հեռավար դիմորդի, Ուղեգրված ԼՂՀ դիմորդի, Հատուկ դիմորդի՝ Ընդունելության քննության դիմումի մեջ նշած էլեկտրոնային հասցեին ՀՀ փաստաբանական դպրոցի ուղարկելու կամ ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում տեղադրելու պահից:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

6. Ընդունելության քննությունը կազմակերպելու և անցկացնելու նպատակով ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ ձևավորվում է Հանձնաժողով, որը կազմված է Հանձնաժողովի նախագահից և վերջինիս կողմից նշանակված առնվազն 2 (երկու) անդամից:

7. Հանձնաժողովի նախագահ է հանդիսանում ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

8. Հանձնաժողովի լիազորությունները սահմանվում են Կարգով:

9. Հանձնաժողովը լիազորված է՝

1) ընդունել դիմումներ և այլ փաստաթղթեր.

2) կազմակերպել դիմումների գրանցումը.

3) ստուգել ներկայացրած դիմումները և փաստաթղթերը.

4) անհրաժեշտության դեպքում կատարել հարցումներ՝ ներկայացված փաստաթղթերի իսկությունը պարզելու նպատակով.

5) ընդունել որոշումներ.

6) վերահսկել Ընդունելության քննության ընթացքը.

7) ամփոփել Ընդունելության քննության արդյունքները.

8) կատարել Կարգին համապատասխան այլ գործողություններ:

III. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

10. Ընդունելության քննության թափանցիկությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կարող է ներգրավել Դիտորդների:

11. Որպես Դիտորդ կարող են ներգրավվել պետական, միջազգային, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի, ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի **(այսուհետև՝ Խորհուրդ)** անդամները, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրները **(այսուհետև՝ Ունկնդիրներ):**

12. Կարգի 11-րդ կետում նշված կազմակերպությունները դիտորդական առաքելություն իրականացնում են Ընդունելության քննությունից առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ ներկայացնելով դիմումներ Հանձնաժողովի նախագահին՝ նշելով իրենց ներկայացուցչի անունը և ազգանունը:

13. Դիտորդի կարգավիճակը հավաստելու համար վերջինիս տրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի կնիքով վավերացված քարտ:

14. ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է վարձատրել Դիտորդին իր առաքելությունն իրականացնելու համար:

15. Դիտորդն իրավունք ունի՝

1) ներկա գտնվել Ընդունելության քննությանը և արդյունքների ամփոփմանը.

2) Հանձնաժողովի նախագահին բանավոր կամ գրավոր ներկայացնել իր դիտողություն-ները, առաջարկությունները Ընդունելության քննության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ

3) անարգել ծանոթանալ Հանձնաժողովի տնօրինության ներքո գտնվող փաստաթղթերին և Ընդունելության քննության հետ կապված Խորհրդի որոշումներին

4) կատարել Կարգով նախատեսված այլ գործողություններ:

16. ՀՀ փաստաբանական դպրոցը երաշխավորում է Դիտորդի՝ Կարգով նախատեսված իրավունքների ապահովումը:

17. Դիտորդը պարտավոր է՝

1) չխոչընդոտել Հանձնաժողովի գործունեությունը.
2) իր իրավունքներն իրականացնել բարեխղճորեն:

18. Դիտորդի կողմից Կարգի պահանջների խախտման դեպքում Հանձնաժողովը իրավասու է Դիտորդին զրկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:

19. Հանձնաժողովը, ստանալով Դիտորդի կողմից բանավոր կամ գրավոր բողոքը (պահանջը), պարտավոր է անհապաղ արձագանքել:

IV. ԴԻՄՈՐԴ, ՀԵՌԱՎԱՐ (ԱՌՑԱՆՑ, ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՐԴ, ՀԱՎԱԿՆՈՐԴ

20. ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդիր (Հավակնորդ) կարող է լինել բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող գործունակ ֆիզիկական անձը:

21. Եթե անձի բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված ավարտական փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ անձը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև ստացած կրթության ճանաչումն ու համարժեքությունը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ստացած կրթության համարժեքությունը ճանաչվում է միջազգային պայմանագրով կամ այլ իրավական ակտով:

22. ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդիր (Հավակնորդ) չի կարող լինել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

23. Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանձին մրցույթներով՝ մասնագիտական ուղղվածության (1.քրեաիրավական, 2.քաղաքացիաիրավական (վարչաիրավական)), ուսուցման ձևի (1.հեռավար (առցանց, դիստանցիոն), 2. առկա (ստացիոնար)), հեռավար ուսուցման Ուղեգրված ԼՂՀ դիմորդ լինելու հիմքերով:

24. Հեռավար (առցանց, դիստանցիոն) ուսուցման համար դիմած և մրցույթով չանցած Դիմորդներն իրենց ստացած միավորներով մասնակցում են Կարգի 23-րդ կետով նախատեսված Դիմորդների ընդհանուր մրցույթին:

25. Հեռավար (առցանց, դիստանցիոն) ուսուցման Դիմորդ է համարվում Կարգի 20-րդ և 21-րդ կետերին համապատասխանող այն անձը, ով վերջին մեկ տարին փաստացի բնակվում է, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից նվազագույնը 80 (ութսուն) կմ հեռավորության վրա:

26. Դիմորդների վերաբերյալ իրակարգավորումներն այնքանով, որքանով իրենց էությամբ կիրառելի են, պարտադիր են նաև Հեռավար (առցանց, դիստանցիոն) Դիմորդների, Ուղեգրված ԼՂՀ դիմորդների, Հատուկ դիմորդների համար:

27. Խորհուրդը սահմանում է հեռավար (առցանց, դիստանցիոն) ուսուցման համար ընդունելության քննության կազմակերպման, անցկացման, ուսումնառության առանձնահատկությունները (այդ թվում՝ արտոնությունները) ԼՂՀ այն դիմորդների համար, որոնք ՀՀ փաստաբանական դպրոց ներկայացնում են ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից տրված ուղեգրեր (**այսուհետ՝ Ուղեգրված ԼՂՀ դիմորդներ**):

28. Ուղեգրված ԼՂՀ դիմորդը սահմանված ընթացակարգով ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից ավարտական փաստաթուղթ ստանալուց հետո կարող է անդամակցել միայն ԼՂՀ փաստաբանների պալատին՝ գործունեություն իրականացնելով ԼՂՀ-ում:

29. Կարգի 28-րդ կետով Ուղեգրված ԼՂՀ դիմորդի ավարտական փաստաթուղթը՝ հավաստագիրը, ունի հատուկ ձև, որը կիրառելի է միայն ԼՂՀ-ում:

30. Հանձնաժողովը հաշմանդամ Հավակնորդին ապահովում է հատուկ հարմարություն, եթե նման պահանջի մասին Ընդունելության քննության մասնակցության դիմումում նշվել է:

V. ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

31. Ընդունելության քննությանը մասնակցելու համար Ժամանակացույցում նշված ժամկետում Դիմորդը Հանձնաժողովին առձեռն կամ փոստով՝ հետադարձ ծանուցմամբ, հանձնում է՝

1) սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմում.

2) ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկ.

3) բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմ, վկայագիր) պատճենը կամ համապատասխան տեղեկանք բուհից, ընդ որում՝ տեղեկանք ներկայացնելու դեպքում Դիմորդը պարտավոր է ոչ ուշ, քան ուսումնառության սկիզբը Հանձնաժողովին ներկայացնել դիպլոմի պատճենը.

4) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

5) 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ գունավոր, վերջին վեց ամսվա վաղեմության.

6) Ընդունելության քննությանը մասնակցության վճարի անդորրագրի պատճենը՝ բացառությամբ Կարգի 64-րդ կետով նախատեսված դեպքի.

7) հեռավար ուսուցման Դիմորդների դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք, որը կհավաստի Դիմորդի՝ վերջին մեկ տարին Երևան քաղաքից նվազագույնը 80 (ութսուն) կմ հեռավորության վրա փաստացի բնակվելու, այդ թվում՝ դիմելու պահին, հանգամանքը.

8) ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից տրված ուղեգիրը (միայն Ուղեգրված ԼՂՀ դիմորդների համար):

32. Կարգի 31-րդ կետով նախատեսված դիպլոմի (վկայագրի), անձնագրի պատճենների հետ ներկայացվում է նաև դրանց բնօրինակները: Բնօրինակները պատճենների հետ համադրելուց հետո Հանձնաժողովի անդամը նույն օրը վերադարձնում է բնօրինակները:

33. Օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի դեպքում անհրաժեշտ է նաև ներկայացնել հայերեն պատշաճ թարգմանությունը՝ նոտարական վավերացմամբ:

34. Չի թույլատրվում ներկայացնել հատուկ զգեստով լուսանկար (օրինակ՝ զինվորական, ոստիկանական և այլն):

35. Ընդունելության քննության դիմումի, ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկի ձևերը սահմանում է Հանձնաժողովը:

36. Ընդունելության քննության դիմումը, ի թիվս այլ պահանջների, պետք է նշում պարունակի մասնագիտական ուղղվածության (1. քրեաիրավական, 2. քաղաքացիաիրավական (վարչաիրավական)), ուսուցման ձևի (1. հեռավար (առցանց, դիստանցիոն), 2. առկա (ստացիոնար)) վերաբերյալ:

37. Դիմորդը կարող է մինչև Ընդունելության քննության դիմումների ընդունման վերջնաժամկետը փոփոխել Ընդունելության քննության դիմումի մեջ նշած մասնագիտական ուղղվածությունը (1. քրեաիրավական, 2. քաղաքացիաիրավական (վարչաիրավական)), ուսուցման ձևը (1. հեռավար (առցանց, դիստանցիոն), 2. առկա

(ստացիոնար)), Ուղեգրված ԼՂՀ դիմորդ լինելու հիմքը, որի համար գրավոր դիմում է Հանձնաժողովի նախագահին: Նշված ժամկետից հետո ներկայացված դիմումները թողնվում են առանց քննության:

38. Եթե դիմումը և կից փաստաթղթերն ուղարկվել են փոստով, ապա ուղարկման փոստային դրոշմակնիքը պետք է լինի ոչ ուշ, քան դիմումների ընդունման համար նշված վերջնաժամկետի օրը:

39. Թերի (ոչ լրիվ) լրացված դիմումների դեպքում Հանձնաժողովի անդամն առաջարկում է լրացնել դրանք:

40. Սահմանված ժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն ընդունվում:

41. Հանձնաժողովը ողջամիտ ժամկետում իրականացնում է ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգում:

42. Ստուգումների արդյունքներով Հանձնաժողովն որոշում է ընդունում Ընդունելության քննությանը Դիմորդին չթույլատրելու մասին, եթե՝

1) չի ներկայացրել Կարգի 31-րդ կետում նշված փաստաթղթերը, չի համապատասխանում Կարգի պահանջներին,

2) ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

43. Կարգի 42-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում Հանձնաժողովը, Ընդունելության քննության մասնակցության վճարը վճարած լինելու պարագայում, երկշաբաթյա ժամկետում վերադարձնում է Ընդունելության քննության մասնակցության վճարը: Սույն իրավիճակում Դիմորդը գրավոր դիմում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ նշելով բանկային անհրաժեշտ վավերապայմանները (հաշվեհամար, բանկի անվանում, անուն, ազգանուն և այլն): Սույն կետում նշված երկշաբաթյա ժամկետի հաշվարկը սկսվում է գումարի վերադարձը կատարելու համար անհրաժեշտ բոլոր տվյալների փոխանցման օրվանից:

44. Եթե Հանձնաժողովը Կարգի պահանջների կատարման նպատակով ձեռնարկել է որոշակի գործողություններ՝ Դիմորդի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար և ողջամիտ ժամկետում չի ստացել դրանք, ապա վերջինս կարող է թույլատրվել Ընդունելության քննությանը՝ պայմանով, որ ընդունելության քննությանը Հավակնորդի մասնակցությունը բացառող հիմքերի բացահայտվելու դեպքում Հավակնորդը չի թույլատրվի մասնակցելու Ընդունելության քննությանը, իսկ եթե մասնակցել է, ապա չի թույլատրվի սովորելու ՀՀ փաստաբանական դպրոցում:

45. Կարգի 42-րդ կետով նախատեսված դեպքերի բացակայության դեպքում Հանձնաժողովը որոշում է ընդունում Ընդունելության քննությանը Դիմորդին թույլատրելու մասին:

46. Ընդունելության քննությանը Դիմորդին չթույլատրելու մասին որոշման ընդունման դեպքում ներկայացված դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են վերադարձվել վերջինիս:

47. Դիմորդը, Հավակնորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել Ընդունելության քննության մասնակցությունից: Սույն դեպքում Ընդունելության քննության մասնակցության վճարը վերադարձվում է Կարգի 67-րդ և 68-րդ կետերին համապատասխան:

48. Կարգի 42-րդ, 44-րդ և 45-րդ կետերով նախատեսված որոշումը փակցվում է ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական շենքում՝ բոլորի համար տեսանելի վայրում կամ տեղադրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի պաշտոնական կայքէջում կամ ՀՀ

փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում կամ ուղարկվում է Դիմորդին՝ Ընդունելության քննության դիմումում նշված էլեկտրոնային հասցեին կամ առձեռն հանձնվում է Դիմորդին կամ փոստով՝ հետադարձ ծանուցմամբ, ուղարկվում է Դիմորդին՝ իր դիմումում նշված հասցեով:

49. Ընդունելության քննությանը Դիմորդին թույլատրելու մասին Հանձնաժողովի որոշմամբ Դիմորդը ձեռք է բերում Հավակնորդի կարգավիճակ:

50. Ընդունելության քննությանը Դիմորդին չթույլատրելու մասին որոշումը կարող է բողոքարկվել Խորհրդին՝ որոշման մասին իրազեկվելու օրվանից ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կամ դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում և կարգով:

51. Բողոքը ներկայացվում է գրավոր, Խորհրդի նախագահի անվամբ՝ նշելով՝

1) բողոք ներկայացնող անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսի համարը.

2) վիճարկվող որոշման օրը, ամիսը, տարեթիվը և համառոտ բովանդակությունը.

3) հիմնավորումներ, թե ինչու է վիճարկում Հանձնաժողովի որոշումը.

4) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և թերթերի քանակը (դրանց առկայության դեպքում).

Դիմորդը ստորագրում է բողոքը:

52. Գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը չպահպանելու դեպքում Խորհրդի նախագահը առանց նիստ գումարելու կարող է իր որոշմամբ բողոքը վերադարձնել՝ նշելով, թե Կարգի որ պահանջը չի պահպանել: Դիմորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

53. Կարգի 51-րդ կետի պահանջներին բավարարող բողոք ստանալու դեպքում Խորհրդի նախագահը Խորհրդի անդամներից կամ այլ մասնագետներից կարող է նշանակել զեկուցող:

54. Զեկուցող նշանակվելու դեպքում Խորհրդի նախագահը զեկուցողին տրամադրում է բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

55. Խորհուրդը բողոքը քննում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում բողոքի ստացման պահից երկշաբաթյա ժամկետում, իսկ բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է երկարացվել:

56. Խորհրդի նախագահը նիստի տեղի և ժամանակի մասին նիստից առնվազն երկու օր առաջ էլեկտրոնային փոստով ծանուցում է բողոք ներկայացրած անձին: Ծանուցված բողոք բերած անձի Խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննությանը: Բողոք բերող անձի էլեկտրոնային հասցեի փոփոխված լինելու կամ չաշխատելու դեպքում Խորհուրդը որևէ պատասխանատվություն չի կրում, և ծանուցումը համարվում է կատարված պատշաճ՝ բացառությամբ, երբ բողոք ներկայացրած անձը նախապես գրավոր տեղեկացրել է իր նոր էլեկտրոնային հասցեի մասին:

57. Խորհրդի նիստի ժամանակ բողոք ներկայացրած անձը (մասնակցության դեպքում) ներկայացնում է բողոքի հիմնական փաստարկները և իրավական հիմնավորումները: Խորհրդի նախագահի կողմից զեկուցող նշանակված լինելու դեպքում Խորհուրդը կարող է լսել նաև զեկուցողին: Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ բողոքի քննարկմանը ներկա գտնվող բողոք ներկայացրած անձին, ինչպես նաև զեկուցողին:

58. Քննելով բողոքը՝ Խորհուրդը կայացնում է որոշում՝

1) ներկայացրած բողոքը մերժելու և Հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին, կամ
2) ներկայացրած բողոքը բավարարելու և Հանձնաժողովի որոշումն անվավեր (ամբողջությամբ կամ մասնակի) ճանաչելու մասին:

59. Խորհրդի որոշման կայացման ժամանակ քննարկումներին մասնակցում են միայն Խորհրդի անդամները:

60. Խորհրդի որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է Խորհրդի նախագահի կողմից այն ընդունելուց անմիջապես հետո: Խորհրդի որոշումը բողոք բերած անձին տրամադրվում է ողջամիտ ժամկետում:

61. Եթե Խորհուրդը բավարարում է բողոքը և վերացնում է Հանձնաժողովի՝ Ընդունելության քննությանը Դիմորդին չթույլատրելու մասին որոշումը, ապա Խորհրդի որոշումը հիմք է Դիմորդին որպես Հավակնորդ ճանաչելու և Ընդունելության քննությանը Դիմորդին թույլատրելու համար: Եթե սույն կետով նախատեսված Խորհրդի որոշումն ընդունվել է Ընդունելության քննության ավարտից հետո, ապա ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է տվյալ Հավակնորդի համար կազմակերպել նոր Ընդունելության քննություն:

VI. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ

62. Դիմորդներից գանձվում է Ընդունելության քննության մասնակցության վճար **(այսուհետև՝ Վճար)**՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

63. Վճարումը կատարվում է անկանխիկ՝ ՀՀ փաստաբանական դպրոցի հաշվարկային հաշվին փոխանցելու եղանակով:

64. Վճարից ազատվում են՝

1) առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամ Դիմորդները.
2) իրենց խնամքին անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնողները.
3) 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկները.
4) զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները.
5) Ուղեգրված ԼՂՀ Դիմորդները.
6) Դիմորդները, ովքեր առնվազն 2 (երկու) անգամ անընդմեջ մասնակցել են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննությանը՝ յուրաքանչյուր անգամ հաղթահարելով Ընդունելության քննության նվազագույն շեմը:

Խորհուրդն իրավասու է սահմանել Վճարից ազատման այլ հիմքեր ևս:

65. Կարգի 64-րդ կետում նշված հանգամանքները պետք է հիմնավորված լինեն համապատասխան փաստաթղթերով, և Դիմորդն այդ մասին պետք է նշում կատարի Ընդունելության քննության մասնակցության դիմումի մեջ:

66. Հանձնաժողովը քննության է առնում Վճարից ազատելու խնդրանքը և որոշում է ընդունում այն բավարարելու և վճարից ազատելու կամ չբավարարելու և վճարից չազատելու մասին՝ այդ մասին տեղեկացնելով Դիմորդին: Վճարից ազատելու խնդրանքը մերժելու դեպքում Հանձնաժողովը Դիմորդին պետք է տրամադրի լրացուցիչ եռօրյա ժամկետ՝ վճարում կատարելու համար: Եռօրյա ժամկետը հաշվարկվում է Դիմորդի կողմից համապատասխան որոշումը ստանալու պահից:

67. Մինչև Հանձնաժողովի կողմից Կարգի 42–րդ կամ 44–րդ կամ 45-րդ կետերով նախատեսված որոշում ընդունելը Դիմորդն իրավունք ունի դիմել Հանձնաժողովին և երկշաբաթյա ժամկետում հետ ստանալու Վճարը: Սույն կետում սահմանված դեպքում Վճարը վերադարձվում է ամբողջությամբ:

68. Մինչև Ընդունելության քննությունը Հավակնորդն իրավունք ունի դիմել Հանձնաժողովին և երկշաբաթյա ժամկետում հետ ստանալու Վճարի 50 (հիսուն) տոկոսը:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

69. Ընդունելության քննությունն անցկացվում է հարցաշարերով (թեստավորման եղանակով):

70. Ընդունելության քննության անցկացման նպատակով կազմվում է շտեմարան **(այսուհետև՝ Շտեմարան),** որն ընդգրկում է հարցեր ՀՀ քաղաքացիական իրավունքից, ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքից, ՀՀ քրեական իրավունքից, ՀՀ քրեական դատավարության իրավունքից, ՀՀ սահմանադրական իրավունքից, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից), ՀՀ վարչական իրավունքից, ՀՀ վարչական դատավարության իրավունքից:

71. Շտեմարանը կազմվում է հայերեն:

72. Շտեմարանը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով:

73. Հարցաշարերում նշված յուրաքանչյուր հարց ունի 4 (չորս) այլընտրանքային պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ պատասխան համարվում, իսկ մյուսները՝ սխալ են կամ հարցաշարի ճիշտ պատասխանի համեմատությամբ՝ ոչ լիարժեք, որոնք նույնպես որակվում են որպես սխալ պատասխաններ:

74. Ճիշտ պատասխանը կարող է տառացի չհամընկնել իրավական ակտի շարադրանքին: Հավակնորդը պարտավոր է պատասխանները նշել ղեկավարվելով Շտեմարանի հրապարակման օրվա դրությամբ գործող օրենսդրությամբ:

75. Շտեմարանում առկա անճշտությունների կամ առարկությունների (առաջարկություններ-ի) վերաբերյալ Հավակնորդները կամ շահագրգիռ անձինք կարող են դիմել Հանձնաժողովին՝ ուղարկելով էլեկտրոնային հաղորդագրություն ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին:

76. Հանձնաժողովը, ուսումնասիրելով անճշտությունները կամ առարկությունները (առաջարկությունները) ոչ ուշ, քան Ընդունելության քննությունից 3 (երեք) օր առաջ ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն այն հարցերի վերաբերյալ, որոնք փոփոխվել կամ հանվել են Շտեմարանից:

77. Ընդունելության քննության անցկացման օրը և ժամին Հավակնորդը պետք է ներկայանա Ընդունելության քննության համար սահմանված վայրը:

78. Հանձնաժողովը գրանցում է Հավակնորդին միայն իր անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

79. Վիճակահանությամբ որոշվում է քննասենյակում Հավակնորդի զբաղեցնելու տեղը:

80. Յուրաքանչյուր Հավակնորդ վիճակահանությամբ ընտրում է համապատասխան թերթիկ, որի վրա առկա են Հավակնորդի անվան, հայրանվան, ազգանվան, ստորագրության, անհատական համարի և ծածկանիշի (այսուհետև՝ Ծածկանիշ) տողեր: Անվան, ազգանվան, հայրանվան և ստորագրության տողերը լրացնում է Հավակնորդը, իսկ Ծածկանիշի և անհատական համարի տողերը արդեն լրացված են լինում:

81. Քննության ժամանակ Հավակնորդին չի թույլատրվում՝

1) քննական սրահ տանել (մտցնել) որևէ նյութ, թուղթ, գրիչ, պայուսակ, ուտելիք, հեռահաղորդակցման և համակարգչային սարքեր, այդ թվում՝ բջջային հեռախոս,

ձայնագրիչներ կամ այլ պարագաներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովը հաշմանդամության կամ առողջական վիճակի հետ կապված խնդիրներ ունեցող Հավակնորդին հատուկ կարիքների համար թույլատրել է ուտելիք կամ այլ պարագաներ քննական սրահ տանել (մտցնել).

2) օգտագործել Շտեմարան, իրավական ակտեր, օրենքների մեկնաբանության գրքեր, դասագրքեր, նախապես կազմված գրառումներ կամ այլ նյութեր, այդ թվում՝ նման տեղեկություններ պարունակող կամ տրամադրող աուդիո և այլ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ.
3) քննական սրահում և դրա հարակից տարածքներում ծխել, խոսել, ժեստերով կամ որևէ կերպ հաղորդակցվել.
4) առանց թույլտվության լքել քննական սենյակը.
5) այլ կերպ խոչընդոտել քննության բնականոն ընթացքը:

82. Կարգի պահանջները խախտած Հավակնորդը հեռացվում է քննասենյակից և համարվում է Ընդունելության քննությունը չհանձնած: Հեռացման վերաբերյալ Հանձնաժողովը ընդունում է որոշում, որը ողջամիտ ժամկետում տրամադրվում է Հավակնորդին

83. Քննության ժամանակ Հավակնորդին տրամադրվում է քննության համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև խմելու ջուր:

84. Քննության գրանցման ժամն ավարտվելուց հետո, քննասենյակի մուտքի (ելքի) բոլոր դռները փակվում են և ուշացած Հավակնորդներին չի թույլատրվում մտնել քննասենյակ՝ անկախ ուշացման պատճառից: Սույն դեպքում քննությանը ուշ ներկայացած (անկախ պատճառից) Հավակնորդները համարվում են Ընդունելության քննությանը չմասնակցած:

85. Սահմանված օրը և ժամին քննությանը չներկայացած (անկախ պատճառից) Հավակնորդները համարվում են Ընդունելության քննությանը չմասնակցած:

86. Տեխնիկական պատճառով (համակարգչի անսարքություն, էլեկտրական հոսանքի տատանում և այլն) ամփոփիչ արդյունքները չգրանցվելու դեպքում Հավակնորդին հնարավորություն է ընձեռվում վերստին հանձնելու Ընդունելության քննությունը, եթե տեխնիկական պատճառներն առաջացել են ոչ Հավակնորդի գործողությունների արդյունքում: Սույն կետում սահմանված դեպքում Հավակնորդին հնարավորություն է ընձեռվում հանձնել քննությունը համապատասխան տեխնիկական խնդիրները վերանալուց հետո երրորդ աշխատանքային օրը, որի մասին Հանձնաժողովի նախագահը Խորհրդի անդամներին ծանուցում է էլեկտրոնային փոստի միջոցով:

87. Հարցաշարը լրացնելուց առաջ Հանձնաժողովի անդամներից մեկը կամ համակարգչային օպերատորը Հավակնորդներին պարզաբանում է քննական գործընթացը, այդ թվում՝ ժամանակի սահմանափակման, ինչպես նաև Ընդունելության քննությունը պատշաճ ձևով հանձնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

88. Հանձնաժողովի անդամի կողմից Ընդունելության քննության սկիզբը հայտարարելուց անմիջապես հետո համակարգչային օպերատորը միացնում է Ընդունելության քննության ծրագիրը: Յուրաքանչյուր համակարգչի վրա Ընդունելության քննության ծրագիրը գեներացնում է պատահական կարգով ընտրված 150 (մեկ հարյուր հիսուն) հարց:

89. Ընդունելության քննության տևողությունը երեք ժամ է:

90. Հարցաշարի հարցերի պատասխանների տարբերակները կարող են դասավորվել տարբեր հաջորդականությամբ և կարող են չհամընկնել Շտեմարանում նշված հերթականությանը:

91. Հավակնորդներին հնարավորություն է տրվում ընտրելու Ընդունելության քննության հանձնման ուղղվածությունը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) կամ քրեաիրավական, ընդ որում՝ Հավակնորդը պետք է ընտրի այն ուղղվածությունը, որը նշել է Ընդունելության քննության դիմումի մեջ:

92. Մասնագիտական ուղղվածությունն ընտրելուց հետո Հավակնորդը չի կարող այն փոխել՝ անկախ որևէ պատճառից:

93. Եթե Հավակնորդի՝ Ընդունելության քննության դիմումի մեջ նշած մասնագիտական ուղղվածությունը տարբերվում է Ընդունելության քննության օրվա ընտրած մասնագիտական ուղղվածությունից, ապա Հավակնորդը համարվում է Ընդունելության քննությունը չհանձնած:

94. Քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությունն ընտրած Հավակնորդի հարցաշարում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

1) ՀՀ քաղաքացիական իրավունքից՝ 50 (հիսուն).
2) ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքից՝ 45 (քառասունհինգ).
3) ՀՀ քրեական իրավունքից՝ 10 (տասը).
4) ՀՀ քրեական դատավարության իրավունքից՝ 15 (տասնհինգ).
5) ՀՀ սահմանադրական իրավունքից՝ 5 (հինգ).
6) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից)՝ 5 (հինգ).
7) ՀՀ վարչական իրավունքից՝ 10 (տասը).
8) ՀՀ վարչական դատավարության իրավունքից՝ 10 (տասը) հարց:

95. Քրեաիրավական ուղղվածությունն ընտրած Հավակնորդի հարցաշարում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

1) ՀՀ քրեական իրավունքից՝ 50 (հիսուն).
2) ՀՀ քրեական դատավարության իրավունքից՝ 45 (քառասունհինգ).
3) ՀՀ քաղաքացիական իրավունքից՝ 10 (տասը).
4) ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքից՝ 15 (տասնհինգ).
5) ՀՀ սահմանադրական իրավունքից՝ 5 (հինգ).
6) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից)՝ 5 (հինգ).
7) ՀՀ վարչական իրավունքից՝ 10 (տասը).
8) ՀՀ վարչական դատավարության իրավունքից՝ 10 (տասը) հարց:

96. Հավակնորդը հարցաշարի հարցերին պատասխանում է մկնիկով նշում կատարելու միջոցով: Հավակնորդը մինչև համակարգչային ծրագիրը փակելը կարող է իր ընտրած պատասխանների տարբերակները փոխել:

97. Հավակնորդը հարցերին պատասխանելուց հետո պարտավոր է Ծածկանիշը մուտքագրել համակարգչային ծրագրում: Հավակնորդը պարտավոր է Ծածկանիշը մուտքագրել նաև այն դեպքում, երբ ժամանակի ավարտի պատճառով համակարգը փակել է ծրագիրը:

98. Ծածկանիշը չմուտքագրելու դեպքում համարվում է, որ Հավակնորդը չի հանձնել Ընդունելության քննությունը:

99. Ծածկանիշը մուտքագրելուց և հաստատելուց հետո Հավակնորդը կարող է համապատասխան համակարգչային էկրանի միջոցով տեղեկանալ իր ստացած միավորների մասին:

100. Հավակնորդը Ընդունելության քննության օրը կարող է ստանալ իր կողմից սխալ լուծած հարցերի օրինակը՝ թղթային տարբերակով:

101. Հավակնորդը կարող է դուրս գալ քննասենյակից բացառապես Հանձնաժողովի անդամներից կամ Դիտորդներից մեկի ուղեկցությամբ: Միաժամանակ մեկից ավելի Հավակնորդների չի թույլատրվում դուրս գալ քննական սրահից՝ բացառությամբ արտակարգ բնույթ կրող դեպքերի:

102. Եթե Դիտորդի կամ Հանձնաժողովի անդամի մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ Հավակնորդն իր մոտ թաքցնում է Կարգի 81-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա Դիտորդը կարող է հրավիրել Հանձնաժողովի որևէ անդամի, իսկ Հանձնաժողովի անդամը՝ Դիտորդի և նրա ներկայությամբ Հավակնորդից պահանջել ցույց տալու արգելված նյութը (առարկան): Հավակնորդի ցանկությամբ գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կարող է ցույց տրվել նույն սեռի առնվազն երկու անձի (դիտորդի և (կամ) Հանձնաժողովի անդամի) ներկայությամբ՝ առանձին սենյակում: Եթե Հավակնորդը հրաժարվում է ցույց տալ իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը, ապա Հավակնորդը հեռացվում է քննական սրահից, և համարվում է, որ չի հանձնել Ընդունելության քննությունը: Սույն կետում նշված դեպքում Հանձնաժողովը ընդունում է որոշում, որը ողջամիտ ժամկետում տրամադրվում է Հավակնորդին:

103. Բացի Հանձնաժողովի անդամներից, Խորհրդի անդամներից, Դիտորդներից, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներից և Հավակնորդներից՝ այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել քննասենյակում:

104. Քննական սրահում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել միայն Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

105. Ընդունելության քննության ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ցանկացած ձևով օգնել Հավակնորդներին:

106. Քննությունների ընթացքը (այդ թվում՝ համակարգիչները) կարող է տեսանկարահան-վել կամ տեսաձայնագրվել:

VIII. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

107. Քննության ավարտից հետո թեստավորման արդյունքներն ամփոփելու նպատակով Հանձնաժողովը գումարում է նիստ:

108. Հանձնաժողովի որոշումը հայտարարվում է թեստավորման արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո՝ փակցնելով այն ՀՀ փաստաբանական դպրոցում՝ բոլորի համար տեսանելի վայրում, տեղադրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի պաշտոնական կայքէջում կամ ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Հավակնորդին՝ Ընդունելության քննության իր դիմումում նշված հասցեով:

109. Հարցաշարում նշված յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի ընտրության համար Հավակնորդը ստանում է 1 (մեկ) միավոր, իսկ սխալ կամ որևէ պատասխան ընտրված (նշված) չլինելու դեպքում՝ 0 (զրո) միավոր:

110. ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք է ստանում Խորհրդի կողմից սահմանած տեղերի քանակով Ընդունելության քննության նվազագույն շեմը հաղթահարած և առավելագույն բարձր միավորներ (ըստ միավորների աճման) ստացած Հավակնորդները:

111. Եթե անցողիկ վերջին տեղին հավակնում են հավասար միավորներ ստացած մեկից ավելի Հավակնորդներ, ապա բոլոր այդ Հավակնորդները իրավունք են ստանում սովորելու ՀՀ փաստաբանական դպրոցում:

112. Այն Ունկնդիրները, ովքեր ընդունելության քննության արդյունքների ամփոփման օրվա դրությամբ ունեն իրավաբանի՝ 5 (հինգ) և ավելի տարվա մասնագիտական (իրավաբանական) ստաժ, ընդունելության քննության արդյունքների ամփոփումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին պետք է ներկայացնեն համապատասխան փաստաթղթեր (աշխատանքային գրքույկի պատճենը, քաղվածք աշխատանքային գրքույկից, տեղեկանք և այլ փաստաթղթեր), որպեսզի հավաստվի վերջիններիս համապատասխան ստաժ ունենալը:

113. Հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, ողջամիտ ժամկետում որոշում է ընդունում՝ փաստելով Ունկնդրի՝ իրավաբանի՝ 5 (հինգ) և ավելի տարվա մասնագիտական (իրավաբանական) ստաժի առկայությունը կամ բացակայությունը:

114. Մինչ ՀՀ փաստաբանական դպրոցում ուսումնառության սկիզբը, եթե Ունկնդիրը չի ցանկանում ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել ուսումնառության պայմանագիր կամ չի ցանկանում մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցում անցկացվող դասընթացներին, ապա, ըստ ռոտացիոն սկզբունքի (միավորների աճման), Հանձնաժողովի որոշմամբ ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք կարող է ձեռք բերել այն Ունկնդիրը, ով հաջորդն է հաղթահարել Ընդունելության քննության՝ տվյալ հոսքի մասնագիտական ուղղվածության նվազագույն շեմը:

IX. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

115. Հավակնորդը կարող է Ընդունելության քննության արդյունքները բողոքարկել Խորհրդին Ընդունելության քննության արդյունքները հրապարակելուց հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կամ դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով:

116. Հավակնորդը Խորհրդին իր բողոքը ներկայացնում է Խորհրդի նախագահի անվամբ, գրավոր նշելով՝

1) իր անունը, ազգանունը, բնակության հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը.

2) վիճարկվող հարցի բովանդակությունը և իր հիմնավորումները.

3) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և թերթերի քանակը (դրանց առկայության դեպքում).

Հավակնորդը ստորագրում է բողոքը:

117. Գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը պահպանված չլինելու դեպքում Խորհրդի նախագահը առանց նիստ գումարելու կարող է իր որոշմամբ բողոքը վերադարձնել Հավակնորդին՝ պարտադիր նշելով, թե Հավակնորդը Կարգի որ պահանջը չի կատարել: Հավակնորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին: Սույն կարգով նախատեսված ժամկետանց բողոքը Խորհրդի նախագահը վերադարձնում է բողոք ներկայացրած անձին՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է միջնորդություն բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին և Խորհրդի նախագահը ժամկետը բաց թողելու պատճառները հարգելի է համարել:

118. Կարգի 116-րդ կետի պահանջներին բավարարող բողոք ստանալու դեպքում Խորհրդի նախագահը նշանակում է Խորհրդի անդամներից կամ Խորհրդի անդամ չհանդիսացող անձանցից զեկուցող:

119. Խորհրդի նախագահը զեկուցողին է տրամադրում բողոքը և դրան կից ներկայացված բոլոր փաստաթղթերը:

120. Զեկուցողը, ուսումնասիրելով բողոքը և դրան կից փաստաթղթերը, կազմում է եզրակացություն:

121. Զեկուցողի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից է (անուն, ազգանուն, կրթությունը, մասնագիտությունը, իսկ առկայության դեպքում նաև՝ գիտական աստիճանը և կոչումը) կազմվել եզրակացությունը:

122. Թեստերի վիճարկման դեպքում զեկուցողի եզրակացության մեջ պետք է արտացոլված լինեն վիճարկվող հարցերի և դրանց շտեմարանային պատասխանները, այն պատասխանը, որը ընտրել է բողոք բերած անձը և այն պատասխանը, որը, ըստ Շտեմարանի, համարվել է ճիշտ, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը, զեկուցողի հիմնավորումները և կարծիքը:

123. Տեխնիկական անսարքության վերաբերյալ հարցի վիճարկումը կարող է իրականացվել մինչև Ընդունելության քննության ավարտը՝ Ծածկանիշը համակարգչային ծրագրում մուտքագրելու պահը:

124. Խորհուրդը Հավակնորդի բողոքը քննում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում բողոքի ստացման պահից մեկ ամսվա ընթացքում:

125. Խորհրդի նախագահը նիստի տեղի և ժամանակի մասին նիստից առնվազն երկու օր առաջ էլեկտրոնային փոստով ծանուցում է բողոք ներկայացրած անձին: Ծանուցված բողոք բերած անձի Խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննությանը: Բողոք բերող անձի էլեկտրոնային հասցեի փոփոխված լինելու կամ չաշխատելու դեպքում Խորհուրդը որևէ պատասխանատվություն չի կրում և ծանուցումը համարվում է կատարված պատշաճ՝ բացառությամբ այն դեպքի, երբ բողոք ներկայացրած անձը նախապես գրավոր տեղեկացրել է իր նոր էլեկտրոնային հասցեի մասին:

126. Խորհրդի նիստի ժամանակ զեկուցողը ներկայացնում է իր եզրակացությունը: Խորհրդի անդամները հարցեր կարող են ուղղել զեկուցողին և բողոքի քննարկմանը ներկա գտնվող բողոք ներկայացրած անձին

127. Քննելով բողոքը՝ Խորհուրդը որոշում է՝

1) բավարարել բողոքը՝ ամբողջությամբ կամ մասամբ.
2) մերժել բողոքը:

128. Խորհրդի որոշման ընդունման ժամանակ Խորհրդի քննարկումներին մասնակցում են միայն Խորհրդի անդամները:

129. Խորհրդի որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է Խորհրդի նախագահի կողմից այն ընդունելուց անմիջապես հետո: Խորհրդի որոշումը բողոք բերած անձին տրամադրվում է ողջամիտ ժամկետում և ուժի մեջ է մտնում բողոք բերած անձի կողմից այն ստանալու պահից:

130. Խորհրդի որոշմամբ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող է նոր զեկուցող նշանակվել:

131. Խորհրդի անդամ չհանդիսացող զեկուցողը բողոքը ուսումնասիրելու և եզրակացություն կազմելու համար կարող է վարձատրվել:

132. Բողոքարկման գործընթացի արդյունքում (այդ թվում՝ այլ Ունկնդրի կողմից քննական հարցերի բողոքարկման արդյունքում) ուսուցում անցնելու իրավունք ստացած

Ունկնդիրը կարող է ուսանել ՀՀ փաստաբանական դպրոցում տվյալ հոսքի դասընթացի ժամանակ, եթե ՀՀ փաստաբանական դպրոցն ունի անհրաժեշտ (բավարար) ռեսուրսներ, իսկ անհրաժեշտ (բավարար) ռեսուրսներ չունենալու դեպքում՝ հաջորդ հոսքի դասընթացների ժամանակ: Սույն կետով սահմանված դեպքերում անձանց ընտրության համար հիմք է ընդունվում ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից ընդունված չափանիշները:

X. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ

133. ՀՀ փաստաբանական դպրոցում ուսումնառությունը կազմակերպվում է վճարովի հիմունքներով՝ բացառությամբ Կարգի 137-րդ կետում նշված դեպքերի:

134. Յուրաքանչյուր հոսքի Ունկնդիրների համար Խորհուրդը սահմանում է ուսման վարձի չափը:

135. Ունկնդիրն ուսման վարձը վճարում է ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքվող ուսումնառության պայմանագրում նշված ժամկետում:

136. Անվճար տեղերի քանակը սահմանում է Խորհուրդը:

137. Խորհրդի կողմից սահմանած անվճար տեղերի շրջանակում անվճար հիմունքներով սովորելու իրավունքից օգտվում են՝

1) առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամ Ունկնդիրները.

2) 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկ Ունկնդիրները.

3) զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայող Ունկնդիրները:

138. Անվճար սովորելու արտոնությունից չեն կարող օգտվել Հատուկ դիմորդները, ինչպես նաև հեռավար եղանակով սովորող ունկնդիրները՝ բացառությամբ հեռավար եղանակով սովորող Ուղեգրված ԼՂՀ դիմորդների (Ունկնդիրների):

139. Ուսման վարձի 10 (տասը) տոկոս զեղչից օգտվում են ՀՀ փաստաբանների պալատի անդամ հանդիսացող փաստաբանների զավակները: Եթե նույն հոսքի ժամանակահատվածում ՀՀ փաստաբանական դպրոցում սովորում են ընտանիքից առնվազն երկու անձ (պապ, տատ, հայր, մայր, եղբայր, քույր), ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար ուսման վարձի զեղչը կազմում է 10 (տասը) տոկոս: Խորհուրդն իրավասու է սահմանել ուսման վարձի զեղչի, արտոնությունների կիրառման այլ դեպքեր:

140. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը (անվճար հիմունքներով սովորելու, ուսման վարձի զեղչի, արտոնությունների), ողջամիտ ժամկետում որոշում է ընդունում:

141. Եթե անվճար հիմունքներով սովորելու իրավունքից օգտվել ցանկացող Ունկնդիրների քանակը գերազանցում է Խորհրդի սահմանած տեղերի քանակը, ապա ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը նրանց կազմից ընտրում է այն Ունկնդիրներին, որոնք անվճար հիմունքով սովորելու են ՀՀ փաստաբանական դպրոցում, ընդ որում՝ Ունկնդիրների ընտրությունը կատարվում է ստորև նշված չափանիշներին համապատասխան.

1) Ընդունելության քննության ավելի բարձր միավորներ.

2) կրթական ավելի բարձր աստիճան:

142. Կարգի 141-րդ կետում նշված չափանիշների հերթականությունը պայմանավորված է վերջիններիս առաջնահերթությամբ:

143. Խորհրդի որոշման հիման վրա ուսման վարձի վճարման հետաձգում (վեց ամիսը գերազանցող ժամանակահատվածով) կարող է թույլատրվել Ընդունելության քննության ժամանակ 150 (մեկ հարյուր հիսուն) միավոր ստացած Ունկնդիրներին:

XI. ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴ

144. Հատուկ դիմորդ է համարվում բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող այն գործունակ ֆիզիկական անձը, ով ունի առնվազն տասը տարվա փաստաբանի կամ դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:

145. Հատուկ դիմորդ չի կարող լինել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

146. Հատուկ դիմորդների ընդունելությունը կատարվում է առանձին մրցույթով, իսկ ուսուցումը՝ առկա (ստացիոնար) կարգով:

147. ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ ձեռք բերելու համար Հատուկ դիմորդը Հանձնաժողովին առձեռն կամ փոստով՝ հետադարձ ծանուցմամբ, հանձնում է՝

1) սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմում.

2) ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկ.

3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ գունավոր, վերջին վեց ամսվա վաղեմության

5) փաստաթղթերի ստուգման վճարի՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամի անդորրագրի պատճենը.

6) բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմ, վկայագիր) պատճենը կամ համապատասխան տեղեկանք բուհից, ընդ որում՝ տեղեկանք ներկայացնելու դեպքում Հատուկ դիմորդը պարտավոր է ոչ ուշ, քան ուսումնառության սկիզբը Հանձնաժողովին ներկայացնել դիպլոմի պատճենը.

7) առնվազն տասը տարվա փաստաբանի, դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթուղթ, ընդ որում՝ փաստաբանի աշխատանքային (մասնագիտական) ստաժի առկայությունը (առկայության դեպքում) հավաստվում է ՀՀ փաստաբանների պալատի կողմից .

8) իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթուղթ, ընդ որում՝ եթե անձի գիտական աստիճանը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ անձը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև իրավասու մարմնի կողմից տրված հավաստագիր (առկայության դեպքում).

9) գիտական կազմակերպության կողմից հաստատված և հրապարակված գիտական աշխատությունների (հոդվածների) ցանկը (առկայության դեպքում).

10) ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (առկայության դեպքում):

148. Կարգի 147-րդ կետի 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերում նշված փաստաթղթերի պատճենների հետ ներկայացվում է նաև դրանց բնօրինակները: Բնօրինակները պատճենների հետ համադրելուց հետո Հանձնաժողովի անդամը նույն օրը վերադարձնում է բնօրինակները:

149. Օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի դեպքում անհրաժեշտ է նաև ներկայացնել հայերեն պատշաճ թարգմանությունը՝ նոտարական վավերացմամբ:

150. Չի թույլատրվում ներկայացնել հատուկ զգեստով լուսանկար (օրինակ՝ զինվորական, ոստիկանական և այլն):

151. Հանձնաժողովը ողջամիտ ժամկետում իրականացնում է Հատուկ դիմորդի ներկայացրած փաստաթղթերի, տվյալների հավաստիության ստուգում և որի արդյունքում ընդունում է համապատասխան որոշում:

152. Եթե Հանձնաժողովին դիմած իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան կամ առնվազն 10 (տասը) տարվա փաստաբանի կամ դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունեցող Հատուկ դիմորդների քանակը գերազանցում է Խորհրդի կողմից հայտարարած տեղերի քանակը, ապա նրանց կազմից Ունկնդրի կարգավիճակ տրվում է հիմք ընդունելով ստորև նշված չափանիշները՝

1) ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչում.

2) գիտական աստիճան, գիտական կոչում.

3) դատավորի, փաստաբանի կամ դատախազի դեպքում՝ դատավորի, փաստաբանի կամ դատախազի աշխատանքային (մասնագիտական) ստաժ.

4) ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի չափանիշներին համապատասխանող գիտական աշխատությունների (հոդվածների) քանակ:

153. Կարգի 152-րդ կետում նշված չափանիշների հերթականությունը պայմանավորված է վերջիններիս առաջնահերթությամբ:

154. Այն դեպքում, երբ որևէ խմբի սահմանաքանակը չի համալրվում, ապա Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ-ում փաստաբանության առաջնահերթությունները, չհամալրված տեղերը կարող է վերաբաշխել մյուս խմբի (խմբերի) միջև:

155. ՀՀ փաստաբանական դպրոցում Ունկնդրի կարգավիճակ տրվում է այն Հատուկ դիմորդին, ով համապատասխանում է Կարգի 144-րդ և 145-րդ կետերի պահանջներին և ընտրվել է Կարգով նախատեսված եղանակով:

156. Հատուկ դիմորդի ներկայացրած փաստաթղթերի և Հանձնաժողովի որոշման հիման վրա ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը ՝

1) Հատուկ դիմորդին տրամադրում է ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ,

2) Հատուկ դիմորդին չի տրամադրում ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ:

157. Բացառիկ դեպքերում, եթե ողջամիտ ժամկետներում Հանձնաժողովը չի ստանում Հատուկ դիմորդի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, ապա կարող է Հատուկ դիմորդին պայմանով տրամադրվել ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ: Պահանջված տեղեկությունների, փաստաթղթերի ստանալուց հետո և Հատուկ դիմորդի կարգավիճակին չհամապատասխանելու հիմքերի բացահայտվելու դեպքում Հատուկ դիմորդը զրկվում է ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակից:

158. Եթե Հատուկ դիմորդին չի տրամադրվել ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ, ապա այդ որոշումը Հատուկ դիմորդը կարող է բողոքարկել Խորհրդին՝ որոշումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում կամ դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում և կարգով

159. Բողոքը ներկայացնելիս Հատուկ դիմորդը պետք է ղեկավարվի Կարգի 51-րդ կետի պահանջներով:

160. Խորհուրդը Հատուկ դիմորդի բողոքը քննում և որոշում է ընդունում բողոքի ստացման պահից երկշաբաթյա ժամկետում, իսկ բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է երկարացվել:

161. Եթե Խորհուրդը բավարարում է Հատուկ դիմորդի բողոքը և վերացնում է որոշումը, ապա Խորհրդի որոշումը հիմք է Հատուկ դիմորդին ՀՀ փաստաբանական դպրոցի Ունկնդրի կարգավիճակ տրամադրելու համար:

162. Մինչ ՀՀ փաստաբանական դպրոցում ուսումնառության սկիզբը, եթե Հատուկ դիմորդ համարվող Ունկնդիրը չի ցանկանում ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել ուսումնառության պայմանագիր կամ չի ցանկանում մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցում անցկացվող դասընթացներին, ապա Հանձնաժողովի որոշմամբ ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք կարող է ձեռք բերել այն Հատուկ դիմորդը, ով համապատասխանում է Կարգի պահանջներին:

XII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

163. Կարգն ուժի մեջ է մտնում Խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:

164. Կարգում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Խորհրդի որոշմամբ:

165. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են Խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի (բողոքի) հիման վրա: